Շրջանային մրցաշար

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մայիսի 29 - Հունիսի 5, 2022թ.

2022թ. մայիսի 29-ից մինչև հունիսի 5-ը Հայաստանի շախմատի ակադեմիան անցկացնում է միջազգային շրջանային մրցաշար միջազգային վարպետի նորմայով:

Վայրը՝ Հայաստանի Շախմատի ակադեմիա /հասցե Շևչենկո 34/:
Ժամակարգը. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 15 րոպե՝ մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլին 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Հավասար միավորներ հավաքելու դեպքում, մրցանակային տեղերը տեղերը որոշվում են ըստ՝

1. Զոնեբորն-Բերգերի գործակցի,
2. անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/,
3. սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
4. հաղթանակների առավելագույն քանակի:

Ժամանակացույց.
Բացման արարողություն - 29 մայիսի, 13:00
1-ին տուր - 29 մայիսի, 15:00
2-րդ տուր - 30 մայիսի, 15:00
3-րդ տուր - 31 մայիսի, 11:00
4-րդ տուր - 31 մայիսի, 16:30
5-րդ տուր - 1 հունիսի, 15:00
6-րդ տուր - 2 հունիսի, 15:00
7-րդ տուր - 3 հունիսի, 15:00
8-րդ տուր - 4 հունիսի, 15:00
9-րդ տուր - 5 հունիսի, 11:00
Փակման արարողություն - 5 հունիսի, 18:00

Մասնակցության վճար.
2300 - 2400 - վարկանիշ ունեցող շախմատիստների համար - 100 ԱՄՆ դոլար
2250 - 2300 - վարկանիշ ունեցող շախմատիստների համար - 200 ԱՄՆ դոլար
2200 - 2250 - վարկանիշ ունեցող շախմատիստների համար - 300 ԱՄՆ դոլար
2000 - 2200 - վարկանիշ ունեցող շախմատիստների համար - 400 ԱՄՆ դոլար
Գիշերակացը ակադեմիայի հյուրատանը սնունդով՝ մեկ անձի համար օրական 25 ԱՄՆ դոլար:

Մրցաշարի կոորդինատոր: Մերի Թաշչյան
E-mail: tournaments@chessacademy.am
Tel.: +374 10-448473, +374 55 630640